

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ:

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ

ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տնտեսության վրա համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը սկսեց ներգործել դեռևս 2008թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներից: Հետևաբար ՀՀ կառավարությունը ձեռնամուխ եղավ հակաճգնաժամային ծրագրի մշակմանը, որը ՀՀ Ազգային Ժողով ներկայացվեց 2008թ. նոյեմբերի 12-ին: Կառավարության հակաճգնաժամային ծրագրով նախատեսված միջոցառումները միտված էին մեղմելու ճգնաժամի հետևանքով առաջացած եւ տնտեսության առջեւ կանգնած ռիսկերը, որոնք պայմանավորված էին

- մասնավոր ուղղակի ներդրումների կրճատմամբ եւ հետաձգմամբ,
- մասնավոր տրանսֆերտների կրճատմամբ,
- հանքահումքային արդյունաբերության ծավալների ժամանակավոր կրճատմամբ,
- շինարարության ոլորտում որոշ ներդրումային ծրագրերի հետաձգմամբ եւ ներդրումների կրճատմամբ:

Ճգնաժամի հաղթահարման նպատակով ՀՀ կառավարության մշակած հակաճգնաժամային ծրագրի հիմնական նպատակներն էին.

1. մակրոտնտեսական կայունության ապահովումը,
2. ֆինանսական հատվածի կայունության ապահովումը,
3. տնտեսական աճի ապահովման համար լրացուցիչ խթանների քաջահայտումը եւ ներդրումը:

Դրանց հասնելու հիմնական քայլերն էին.

- գործարար միջավայրի բարելավումը՝ այդ թվում հարկային վարչարարության դաշտի պարզեցումը եւ փոքր բիզնեսի համար վարչարարության հետ կապված ծախսերի էական կրճատումը,
- գործարարությանը ժամանակավոր աջակցության տրամադրումը՝ այդ թվում ուղղակի վարկավորման, երաշխիքների տրամադրման եւ կապիտալում մասնակցության ձեռով,

- ՓՄՉ վարկավորման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ներգրավումը,
- ենթակառուցվածքներին ուղղված լայնածավալ ծրագրերի իրականացումը եւ այդ շրջանակներում նոր աշխատատեղերի ստեղծումը,
- սոցիալական ուղղվածություն ունեցող ծրագրերի իրականացման եւ պետության ստանձնած սոցիալական պարտավորությունների կատարման առաջնահերթությունը:

ՀՀ կառավարության հակաճգնաժամային ծրագրի հիմնական նպատակն է ոչ միայն հաղթահարել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը՝ նվազագույնի հասցնելով վերջինիս բացասական հետեւանքները Հայաստանի տնտեսության վրա, այլ նաեւ ստեղծել հետագայում կայուն զարգացման եւ որակապես նոր տնտեսության ձեւավորման բավարար հիմքեր:

ՄԱԿՐՈՏԵՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆԱՅՆՈՂ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ աշխատանքը պետք է ուղղորդվի ԿԲ-ի կողմից իրականացվող համանման դրամավարկային քաղաքականությամբ: Դրա շնորհիվ նվազող հարկային եկամուտների պարագայում պահպանվում է ծախսերի մակարդակը, որը խթանում է ամբողջական պահանջարկը՝ նպաստելով գործարար միջավայրի աշխուժացմանը: Իրականացման գործիքը առկա պահուստային եւ ներգրավված արտաքին ռեսուրսներն են:

2009թ. ընթացքում կառավարության մակրոտնտեսական նախաձեռնությունները հետապնդել են հարկաբյուջետային քաղաքականությանը ընդլայնող ուղղվածություն հաղորդելու նպատակ: Մասնավորապես, կառավարությունը կիրառեց իր ամբողջ գործիքակազմը՝ մասնավոր հատվածի տնտեսական ակտիվության նվազումը պետական ծախսային լծակներով փոխհատուցելու համար: Մասնավորապես՝ 2009թ. բյուջետային ծախսերը կկազմեն մոտ 880 մլրդ դրամ՝ 2008թ. 810 մլրդ դրամի դիմաց: Բյուջեի դեֆիցիտը կկազմի ՀՆԱ-ի մոտ 7 տոկոսը:

Տարվա ընթացքում իրականացվող դրամավարկային քաղաքականությունը համահունչ է ձեւավորված մակրոտնտեսական միջավայրին: Այսպես, փոխարժեքի ազատականացմամբ պայմանավորված սպեկուլյատիվ երևույթները կանխելու եւ հնարավոր գնաճային ճնշումներից խուսափելու համար ռեպո տոկոսադրույքը բարձրացվեց 1 տոկոսային կետով՝ հասցվեց 7.75 տոկոսի: Այնուհետեւ փոխարժեքի

ճշգրտմանը, գնաճային ճնշումների թուլացմանը զուգահեռ ռեպո տոկոսադրույքն աստիճանաբար իջեցվել է եւ ներկայումս կազմում է 5.00 տոկոս:

ՀԱՐԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒԽՈՒՄՆԵՐ

Հարկային բնագավառում իրականացվող բարեփոխումների հենքն է Հայաստանի Հանրապետության հարկային վարչարարության ռազմավարության 2008-2011թթ. ծրագիրը, որի գաղափարախոսական հիմքը «դեմքով դեպի հարկատուն» կարգախոսն է: Ծրագրով իրականացվել են հետեւյալ հակաճգնաժամային բնույթի կարեւոր միջոցառումները.

Գործարար աշխարհի համար, մասնավորապես, ՓՄՁ-ի, էապես հեշտացվել են հարկային վարչարարության կանոնները, որոնք նախատեսում են.

- ԱԱՀ հարկման շեմի բարձրացում մինչեւ 58.3 մլն դրամ՝ գործող 3 մլն դրամի փոխարեն, ինչպես նաեւ փոքր եւ միջին ձեռնարկությունների հարկային հաշվետվության պարզեցում. մինչև 100 մլն դրամ շրջանառություն ունեցող ձեռնարկությունների համար հաշվապահական հաշվառման վարումը հարկային հաշվառման կանոնակարգերով՝ միջազգային չափանիշների կիրարկման փոխարեն:
- Մինչեւ 58.35 մլն դրամ շրջանառություն ունեցող հարկ վճարողները շահութահարկի եւ եկամտահարկի ընդհանուր սահմանված կարգով հաշվարկում եւ տարեկան մեկ անգամ շահութահարկի եւ եկամտահարկի պարզեցված հաշվարկ են ներկայացում:
- Մինչեւ 5 աշխատող ունեցող գործատուների կողմից պարտադիր սոցալական վճարումների եռամսյակային հաշվետվության (նախկինում ընդունված ամսականի փոխարեն) ներկայացում:
- ՀԳՄ կտրոններով եւ կրճատ հաշիվ ապրանքագրերով ծախսերը հիմնավորող փաստաթղթի ընդունում տարեկան 36 մլն դրամի չափով՝ գործող 3 մլն դրամ սահմանաչափի փոխարեն:
- Հարկային հաշվետվությունների ընդունման գործընթացի պարզեցում, նախկինում գործող հանձնաժողովների լուծարում եւ փոստով կամ SՀS տեղադրված արկղերի միջոցով հաշվետվությունների ընդունման պրակտիկայի, ինչպես նաեւ ս.թ. հոկտեմբերից հարկային հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով հարկային մարմին

ներկայացնելու մեխանիզմի ներդրում: Այս ամենը նվազագույնի է հասցնում «հարկատու-հարկային տեսուչ» ֆիզիկական շփումը՝ էապես հեշտացնելով հարկատուի կյանքը եւ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը:

- ԱԱՀ ամսական հաշվետվությունների ներկայացման պահանջի վերացում՝ եթե շրջանառությունը փոքր է 100 մլն դրամից՝ նախկին 60 մլն փոխարեն: Վերոհիշյալ կետերում նշված միջոցառումները էապես կխնայեն գործարարների «թանկարժեք» ժամանակը եւ կնվազեցնեն հարկային մարմինների հետ շփման գործարքային ծախսերը:
- ՓՄՁ համար «Հաշվապահական ծառայությունների կենտրոնի» բացում, որը հնարավորություն է ընձեռում տվյալ խմբի հարկատուների համար միասնական քաղաքականություն իրականացնել, ինչպես նաեւ վերջիններիս համար ստանդարտացված որակյալ եւ մատչելի ծառայություններ մատուցել:
- Մշակվել են «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Շահութահարկի մասին» եւ «Եկամտահարկի մասին» օրենքները, որոնք ս.թ. մարտին ընդունվել են ՀՀ Ազգային ժողովի կողմից: Օրենքների ընդունման նպատակն է ՀՀ-ում ձեռագործ գորգերի արտադրությունը ազատել ԱԱՀ-ից եւ շահութահարկից, ինչը կնպաստի մշակութային ժառանգության պահպանմանը՝ գորգագործության ունակությունները եւ հմտությունները ապագա սերունդներին փոխանցելու միջոցով, ինչպես նաեւ հայկական մշակույթի այս ճյուղի միջազգային տարածմանը:
- «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածում նշված ապրանքախմբերի ներմուծման ժամանակ ԱԱՀ վճարման հետաձգում մինչեւ 3 տարի ժամկետով՝ եթե այն գերազանում է 300 մլն դրամը: Նույն պայմանը կիրառվում է նաեւ հիշյալ ցանկում չընդգրկված այն ապրանքախմբերի նկատմամբ, որոնք նախատեսված են կառավարության հավանությանն արժանացած 300 մլն դրամ եւ ավելի արժողություն ունեցող ներդրումային ծրագրերում:
- «Արտոնագրային վճարների մասին» օրենքով 11 տեսակի գործունեության մասով (հիմնականում՝ ինքնագրադրվածների) արտոնագրային վճարի սահմանում, ինչը խաղի նոր կանոններ է նախատեսում հիշյալ բնագավառներում պետության հետ հարաբերությունների առումով՝ ինքնագրադրվածներին հնարավորություն տալով հարկային վարչարարության

համատեքստում ավելի «ապահով» եւ «շահավետ» գործունեություն ծավալելու:

- Որակավորում չստացած հյուրանոցային տնտեսության օբյեկտների հարկման կարգի պարզեցում եւ հարկման հաստատագրված վճարների սահմանում ըստ գոտիականության, ինչը հնարավորություն կտա ձեւավորելու համեմատաբար մատչելի հյուրանոցային ծառայությունների ցանց, որն էլ իր հերթին կարող է հանդիսանալ զբոսաշրջության զարգացման լրջագույն խթան:
- Տուրիզմի զարգացման եւ զբոսաշրջիկների համար Հայաստանի գրավչությունը բարձրացնելու նպատակով կարճաժամկետ (21 օր) այցելությունների համար 15 հազ. դրամից մինչև 3 հազ. դրամ կրճատվել է պետական տուրքը:
- ՀՀ կառավարությունը 2009 թ. առաջին երեք եռամսյակներում իրականացրել է ԱԱՀ-ի գերավճարների շուրջ 11.5 մլրդ դրամի վերադարձը, իսկ մինչեւ տարեվերջ այդ ցուցանիշը կհասնի 15 մլրդ դրամի: Միեւնույն ժամանակ, 2009թ. վերջին գերավճարների մակարդակը 2008թ. համեմատ կնվազի շուրջ 20 մլրդ դրամով: Նշված ռեսուրսները կաջակցեն գործարարներին դիմակայելու ֆինասատնտեսական ճգնաժամը եւ հետագա արդյունավետ գործունեության ծավալման խթան կհանդիսանան:
- Տեսչական ստուգումների իրականացման մասով ՀՀ կառավարությունը աննախադեպ քայլի է դիմել՝ 2009թ. հունիսի 1-ից մինչև 2011թ. հունվարի 1-ը տեսչական ստուգումների չեն ենթարկվի այն տնտեսվարող սուբյեկտները (բացառությամբ ՀՀ ՊԵԿ-ի կողմից), որոնց 2008թ. շրջանառությունը չի գերազանցել 70 մլն դրամը (բացառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերի, անձանց իրավունքների, կյանքի եւ առողջության պաշտպանության, պետության պաշտպանության եւ անվտանգության ապահովման դեպքերի՝ միայն ՀՀ վարչապետի գրավոր համաձայնությամբ, ՓՄՉ ղեկավարի գրավոր դիմումի հիման վրա, ՓՄՉ սուբյեկտը լուծարելիս):
- ՀՀ կառավարության ջանքերով, ինչպես նաեւ միջազգային կառույցների աջակցությամբ ընթացքի մեջ են ՀՀ ԿԱ ՊԵԿ «Հարկատու-3» համակարգչային ծրագրի ձեւավորման աշխատանքները, ինչը հնարավորություն կտա ունենալ նոր մակարդակի տեղեկատվական բազա

հարկատուների տվյալներով, կառուցված առավել ժամանակակից տեխնոլոգիաների հիման վրա, ինչպես նաև տնտեսավարողներին թույլ կտա իրենց հարկային հաշվետվություններն ուղարկել էլեկտրոնային եղանակով:

ՄԱՔՍԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՆՈՒՄՆԵՐ

- Մաքսատներում եւ մաքսային պահեստներում բացվել են մաքսային բրոքերի, ինչպես նաև ինքնահայտարարագրման գրասենյակներ, որոնք էլեկտրոնային կապուղիներով միացված են մաքսատներում եւ մաքսային պահեստներում գործարկվող «TWM» մաքսային ձեւակերպումների համակարգչային ծրագրին: Սույն միջոցառման արդյունքում կրճատվել է մաքսային ձեւակերպումների ժամանակը, նվազագույնի է հասցվել ներմուծող-մաքսային ծառայող ֆիզիկական շփման աստիճանը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը:
- Պարզեցվել են մաքսային ընթացակարգերը՝ ավելացնելով դրույթներ, որոնց համաձայն հետբացթողումային հսկողության արդյունքում հայտնաբերված անճշտությունների դեպքում նախկին հայտարարագիրը ոչ թե անվավեր է ճանաչվում, այլ դրանում կատարվում են համապատասխան ճշգրտումներ: Այս պարագայում ներմուծողը զերծ է մնում ավելորդ ժամանակի եւ ջանքերի կորստից:
- Վերանայվել են TWM մաքսային ձեւակերպումների համակարգչային ծրագրում ռիսկերի ընտրողականության չափանիշները, որի հիմնական նպատակն է բարձրացնել մաքսային հսկողության արդյունավետությունը՝ այն դարձնելով առավել թիրախային եւ ռեսուրս խնայող:
- Կրճատվել է ՀՀ մաքսային սահմանով իրականացվող ներկրման եւ արտահանման համար պահանջվող փաստաթղթերի քանակը՝ այն հասցնելով երեքի: Սա էապես կնվազեցնի ներկրման եւ արտահանման գործընթացների ձեւակերպման ժամկետը:
- Էապես կրճատվել են մի շարք ապրանքատեսակների արտահանման համար պահանջվող փաստաթղթերն ու ընթացակարգերը: Կրճատվել է ներմուծման պահին պարտադիր սերտիֆիկացման ենթակա ապրանքների ցանկը՝ պարտադիր սերտիֆիկացման ենթակա ապրանքատեսակների թիվը 65-ից նվազեցնելով 16-ի, ինչը էականորեն խնայում է գործարարների ժամանակը:

- Հանվել է մաքսային մարմինների կողմից լրացվող մաքսավճարի անդորրագրի ձեւը. ներկայումս այն վճարվում է միայն բանկային համակարգի միջոցով, ինչն էապես նվազեցնում է մաքսային ծառայողների կողմից հնարավոր կոռուպցիոն դրսևորման հնարավորությունները:

ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ՀՀ կառավարության կողմից իրականացվող զարգացման քաղաքականության հիմնական, առանցքային ուղղությունը գործարար միջավայրի բարելավումն է: Կառավարությունը հավակնոտ ծրագիր է նախաձեռնել, որը կոչված է կարճ ժամանակահատվածում կտրուկ բարելավել գործարարությամբ զբաղվելու Հայաստանի վարկանիշը եւ Հայաստանը դասել գործարարությամբ զբաղվելու լավագույն երկրների ցանկում:

Մասնավորապես.

1. Մշակվել են «Անշարժ գույքի հարկի մասին», «Փոխադրամիջոցների գույքահարկի մասին» եւ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը, որոնք նախատեսում են հողի եւ անշարժ գույքի գույքահարկերի փոխարեն մեկ միասնական հարկ, եկամտահարկի եւ սոցիալական ապահովության հարկերի փոխարեն մեկ եկամտային հարկ, արդյունքում նաեւ այս հարկատեսակների մեկական հաշվետվության ձեւեր:
2. Պարզեցվել է իրավաբանական անձ ստեղծելու գործընթացը, մասնավորապես՝ կնիք ունենալու պահանջի վերացման, նվազագույն կանոնադրական կապիտալի չափի եւ գրանցվելիս դրա մասին տեղեկության ներկայացման պարտադրանքի վերացման, վարկավորման գործընթացում բանկերի ռիսկայնության աստիճանի կրճատմանն ուղղված օրենսդրական բարելավումների (սեփականության գրանցման բնագավառում անշարժ գույքի կադաստրի վարման ավտոմատացման համակարգի ներդրման) միջոցով:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

ՀՀ կառավարությունը նախաձեռնել էր մի շարք խոշոր ենթակառուցվածքային ծրագրերի իրականացում, որոնք վերաբերում են ճանապարհային, հեռահաղորդակցման, էներգետիկ, արդյունաբերական, սոցիալական եւ այլ

ենթակառույցներին: Այս ծրագրերը մեծ մասամբ կազմվել են դեռևս մինչև ճգնաժամը եւ ունեն ռեզիոնալ նշանակություն, սակայն հակացիկլիկ բարձր արդյունավետության շնորհիվ՝ այսօր առավել հրատապ են դառնում եւ կարող են էապես նպաստել զբաղվածության մակարդակի պահպանմանը, հետճգնաժամային փուլում աճի եւ զարգացման ապահովմանը: Մրանք նախատեսվում է իրականացնել միջազգային կառույցների եւ մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ՝ կիրառելով պետական-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) սկզբունքները:

Ընդգծենք, որ ենթակառուցվածքային այս ծրագրերի նպատակաուղղված եւ պատշաճ իրականացումը մեծապես նպաստելու է հակաճգնաժամային քաղաքականության արդյունավետությանը եւ էականորեն օգնելու է ճգնաժամից դուրս գալուն միտված ջանքերին:

Դրանցից հիմնականներն են՝

➤ *Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքի կառուցման ծրագիրը*

Սկսվել են նաեւ Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքի կառուցման ծրագրի նախագծային աշխատանքները, որի ավտոմոբիլային ճանապարհի մասն իրականացվում է ԱԶԲ-ից ստացված 1 միլիոն դոլար դրամաշնորհի շրջանակներում: Ծրագրի առաջին փուլը կֆինանսավորվի հիմնականում ԱԶԲ կողմից վարկային ռեսուրսների հաշվին: Մասնավորապես, 2009թ. սեպտեմբերին կնքված 60 միլիոն դոլար վարկային պայմանագրի համաձայն, փաստացի ճանապարհաշինական աշխատանքները սկիզբ կառնեն 2010-ի ապրիլից: 2010-2017թթ. համար այս ծրագրի ֆինանսավորման համար նախատեսվում է ԱԶԲ-ից ստանալ շուրջ 500 միլիոն դոլար վարկ: Ծրագրի ֆինանսավորման հնարավորությունները քննարկվում են նաեւ ՀԲ-ի եւ այլ կազմակերպությունների հետ, ենթադրվում է նաեւ մասնավոր հատվածի մասնակցության հնարավորությունը:

➤ *Իրան-Հայաստան երկաթգծի կառուցման ծրագիրը*

Ի լրումն Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքի ավտոմոբիլային մասի, ծրագիրը ներառում է նաեւ երկաթուղային բաղադրիչ: Երկաթուղու կառուցման նախագծի մշակման աշխատանքներն իրականացվում են պետության, ԱԶԲ-ի, ինչպես նաեւ սիյուռքահայ բարերարի աջակցությամբ: 2009թ. օգոստոսին հիմնադրվել է «Երկաթուղու շինարարության տնօրինություն» ՓԲԸ, որը պետք է համակարգի երկաթուղու շինարարական աշխատանքները:

➤ **Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրերը**

Գյուղական ճանապարհների վերականգնման համար Ասիական զարգացման բանկը տրամադրել է շուրջ 48 մլն ԱՄՆ դոլար վարկ: Շինարարական աշխատանքներն սկսվել են 2008թ. հոկտեմբերին, դրանք կշարունակվեն եւ կավարտվեն 2009-2010թթ.:

«Հագարամյակի մարտահրավեր» ծրագրով իրականացվել է շուրջ 5.3 մլրդ դրամի աշխատանք, որից Արմավիր-Իսահակյան-Գյումրի ավտոճանապարհի 24.5 կիլոմետրանոց 1.5 մլրդ դրամ արժեքով հատվածը հանձնվել է շահագործման:

Միայն Համաշխարհային բանկի Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ֆինանսավորման ծրագրի շրջանակում մինչեւ տարվա վերջ նախատեսվում է իրականացնել մոտ 155 կմ (նախատեսված 140 կմ-ի փոխարեն) ընդհանուր երկարությամբ տեղական նշանակության ճանապարհների վերանորոգում 17.4 մլրդ դրամ ընդհանուր արժողությամբ:

➤ **Գյումրին տեխնոքաղաքի վերակառուցելու ծրագիրը**

Գիտելիքահենք տնտեսության ենթակառույցների ձեւավորման եւ զարգացման նախաձեռնությունների շրջանակներում իրականացվում է Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու ծրագիրը: Ծրագրի գերնպատակն է Գյումրին տեսնել որպես իր ավանդական մշակութային նկարագիրը պահպանած եւ գործարարությամբ զբաղվելու «գերազանցության կենտրոնի» համբավ ունեցող զարգացած քաղաք՝ խոշոր կրթօջախներով եւ գիտահետազոտական կենտրոններով, նորարարությունների, տեղեկատվական եւ բարձր տեխնոլոգիաների նախագծերի մշակման, փորձարկման, կյանքի կոչելու եւ լայնածավալ արտադրություններ հիմնելու հնարավորություններով, ինչպես նաեւ բարձր տեխնոլոգիաներ կիրառող փոքր եւ միջին ձեռնարկություններով: Ծրագրի նպատակն ունի հետեւյալ երեք խոշոր բաղադրիչները՝

- *տեխնոլոգիական եւ արդյունաբերական պարկերի հիմնում,*
- *քիզնես կենտրոնի ստեղծում,*
- *հատուկ տնտեսական գոտու ստեղծում:*

Տեխնոպարկում ընդգրկվելու եւ համատեղ գիտահետազոտական եւ ուսումնական լաբորատորիաներ ստեղծելու նախնական պայմանավորվածություն կա մի շարք միջազգային ընկերությունների

(Մայքրոսոֆթ, Նեյշնլ Ինսթրումենթս, Սան Մայքրոսոֆթենս, Սինոփսիս եւ այլն), ինչպես նաեւ տեղական եւ հայկական սփյուռքի կազմակերպությունների հետ: Ծրագրի իրականացումն առավելապես կհիմնվի պետություն-մասնավոր հատված համագործակցության մեխանիզմների վրա:

Մարզային քաղաքների զարգացումը հնարավորություն կտա ոչ միայն կրճատել Երևանի եւ այլ քաղաքների անհամամասնությունը, այլ նաեւ կբարձրացնի մարզային քաղաքների դերը, հնարավորություն կստեղծի հանրապետության իրական ուրբանիզացման մակարդակի բարձրացման եւ տնտեսական աճի կայունացման համար:

➤ **ՀՀ «Զվարթնոց» օդանավակայանի հարակից տարածքում ազատ տնտեսական գոտու ստեղծման ծրագիրը.**

«Զվարթնոց» օդանավակայանի հարակից տարածքում ազատ տնտեսական գոտու ստեղծման նպատակով «Զվարթնոց» օդանավակայանի Կառավարչի հետ վարվել է բանակցություն, որի ընթացքում ներկայացվել է ազատ տնտեսական գոտու նախնական հատակագիծը:

Այժմ «Զվարթնոց» օդանավակայանի կողմից մշակվում է բիզնես ծրագիր, որի աջակցության եւ ֆինանսավորման աղբյուրները բացահայտելու նպատակով «Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲ ընկերության, Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի, Համահայկական ոսկերիչների եւ ադամանդագործների ասոցիացիայի եւ Ասիական զարգացման բանկի ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունեցել քննարկում:

Զվարթնոցի եւ Շարժայի ազատ տնտեսական գոտիների միջև համագործակցության պայմանավորվածություն է ձեռք բերվել Միացյալ Արաբական Էմիրությունների առևտրի նախարարի հետ:

Ազատ տնտեսական գոտու բիզնես մոդելի մշակման, ինչպես նաեւ Հոլանդիայից խորհրդատու հրավիրելու նպատակով ՀՀ կառավարությունը դիմել է Նիդերլանդների կառավարությանը, մասնավորապես «Flora Holland» ընկերությունից՝ ծաղկի առևտրի (բորսայի) կազմակերպման փորձը Զվարթնոցի գյուղմթերքների կենտրոնում ներդնելու նպատակով:

Մշակվել է «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով կարգավորվում են ազատ տնտեսական գոտիների ստեղծման, դրանցում գործունեության ծավալման եւ լուծարման գործընթացները:

➤ **Նոր ատոմակայանի կառուցումը**

Աշխատանք է տարվել նոր միջուկային էներգաբլոկի կառուցման եւ ուրանի արդյունահանման ու վերամշակման ուղղությամբ, ինչը էներգետիկ անվտանգության եւ աշխարհաքաղաքական տեսանկյունից հույժ կարեւոր նշանակություն ունի Հայաստանի համար: Նոր ատոմակայանի կառուցման հետ կապված ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ: Ընտրվել է խորհրդատու («Warley Parsons») ընկերություն, որը մշակում է տեխնիկատնտեսական հիմնավորումը: Այդ նպատակի համար կառավարությունը մինչեւ տարեվերջ կհատկացնի 400 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: ԱԺ-ի կողմից ընդունվել է «Նոր միջուկային էներգաբլոկի կառուցման մասին» ՀՀ օրենքը:

➤ ***Էլեկտրաէներգետիկայի ոլորտի աշխատանքները.***

1. Մեկնարկել են շինարարահավաքակցման աշխատանքները Ճապոնիայի ՄՀՃԲ կողմից ֆինանսավորվող վարկային ծրագրերում, այդ թվում՝ «Երեւանի ՋԷԿ-ում համակցված ցիկլով շոգեգազային կայանի կառուցում» ծրագրով իրականացվել են հիմնական շինությունների հիմքերի բետոնապատման աշխատանքները եւ «Էլեկտրահաղորդման և բաշխիչ համակարգեր» ծրագրի 110 ենթակայանների եւ SCADA/կապի համակարգի բաղադրիչներում սկսվել են նախագծման աշխատանքները: ՋԷԿ-ի կառուցումը հնարավորություն կտա էապես մեծացնել մատակարարվող էլեկտրաէներգիայի ծավալը՝ միեւնույն ժամանակ կրճատելով վերջինիս ինքնարժեքը:
2. Շարունակվում են Հրազդանի 5-րդ էներգաբլոկի վերակառուցմանն ուղղված գործողությունները, որոնք իրականացվում են «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ կողմից:
3. 2009թ. հունվարի 30-ին ՀՀ ֆինանսների նախարարության, KfW գերմանական բանկի եւ «Հայաստանի բարձրավոլտ էլեկտրացանցեր ՓԲԸ»-ի միջեւ ստորագրվեց «Վարկի տրամադրման եւ ծրագրի ֆինանսավորման պայմանագիր», որի համաձայն «Գյումրի-2» բարձրավոլտ ենթակայանի վերակառուցման նպատակով բյուջետային եւ շուկայական միջոցների խառը ֆինանսավորման տեսքով հատկացվում է մինչեւ 14.6 միլիոն եվրո:
4. Վերակառուցման ու զարգացման միջազգային բանկի կողմից հաստատվել է 1.5 մլն ԱՄՆ դոլար դրամաշնորհը՝ երկրաջերմային երկու ընտրված ծրագրերի համար երկրաբանական եւ երկրաֆիզիկական

հետազոտություններ իրականացնելու նպատակով: Այդ հետազոտությունների դրական արդյունքի դեպքում հնարավոր կլինի սկսել երկրաբանական հետախուզական աշխատանքները:

5. Գերմանական KfW բանկի ֆինանսավորմամբ հաջողությամբ շարունակվում է փոքր ՀԷԿ-երի վարկավորման գործընթացը: Գերմանա-Հայկական հիմնադրամի կողմից վարկավորվել է 11, իսկ ՀԲ-ի ֆինանսավորմամբ «Վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամի» կողմից՝ 23 ՓՀԷԿ:
6. ՀՀ կառավարության եւ ԻԻՀ կառավարության միջեւ Արաքս գետի հիդրոէներգետիկ ներուժի ուսումնասիրության նախագծի շրջանակում ստորագրվել է ՀՀ եւ ԻԻՀ սահմանային երթեւեկության դյուրացման կանոնակարգը եւ ներկայացվել ՀՀ ԱԺ վավերացմանը: Մեղրիի ՀԷԿ-ի կառուցման համար անհրաժեշտ ֆինանսական սխեմայի ճշգրտման նպատակով շարունակվում է բանակցությունը ԻԻՀ հետ:

➤ **Շինարարությունը**

ՀՀ կառավարությունը մշտական ուշադրության կետրոնում է պահում աղետից տուժած եւ սոցիալապես անապահով քաղաքացիների հիմնախնդիրները:

1. Երկրաշարժի հետեւանքով անօթևան մնացած ընտանիքների խնդիրների լուծմանն ուղղված բնակարանային շինարարության իրականացման ծրագրի շրջանակում կազմակերպվել եւ կայացել են Գյումրի քաղաքի Անի և Մուշ-2 թաղամասերում առնվազն 2300 բնակարանի եւ սպասարկման օբյեկտի, Շիրակի մարզի Ախուրյան գյուղում՝ 182 բնակարանի եւ սպասարկման օբյեկտի, Շիրակի մարզի 10 գյուղական բնակավայրերում առնվազն 226 անհատական բնակելի տների, Լոռու մարզի Սպիտակ քաղաքում՝ առնվազն 354 բնակարանի եւ սպասարկման օբյեկտի/արհեստագործների թաղամասի ստեղծումով/ եւ Լոռու մարզի 24 գյուղական բնակավայրերում առնվազն 1821 անհատական բնակելի տների կառուցման մրցույթները: Մինչեւ տարվա վերջ բնակարանաշինության ոլորտում կծախսվի մոտ 25.1 մլրդ դրամ, շահագործման կհանձնվի 118 հազ. քմ մակերեսով բնակելի տարածք, ինչի արդյունքում բնակարանամուտ կնշի 1760 ընտանիք: Կտրամադրվի նաեւ 403 մլն դրամի բնակարանների գնման վկայական:

2. 2008թ. դեկտեմբերին կայացել է Վայոց ձորի մարզի Ձերմուկ քաղաքի չգործող օդանավակայանի տարածքում առաջնահերթ կառուցապատման սխեմաների նախագծերի մշակման մրցույթը: Նախագծային աշխատանքները ընթացքում են: Ծրագրի շրջանակում նախատեսվում է մշակել քաղաքի կառուցապատման սխեման եւ քաղաքաշինական կանոնադրությունը:
3. Մշակվում է Գյումրի քաղաքի պատմամշակութային եւ քաղաքաշինական միջավայրի վերականգնման եւ զարգացման /Կումայրի/ ծրագիրը: Դրա նպատակն է քաղաքի պատմական կառուցապատման քաղաքաշինական վերականգնման, գոյություն ունեցող ռճին հարազատ որոշ հատվածների կառուցապատման ու ճարտարապետական փոքր ձեւերի վերականգնման միջոցով ապահովել պատմական կենտրոնի պահպանումը, ինչպես նաեւ նպաստել ավանդական արհեստագործության վերականգնմանը, փոքր եւ միջին բիզնեսի, տուրիզմի զարգացման եւ ներդրումների համար բարենպաստ պայմանների ու նոր աշխատատեղերի ստեղծմանը:
4. Ազգային մրցունակության խորհրդի գործունեության շրջանակում տուրիզմի զարգացման նպատակով իրականացման փուլում է Տաթևի վանական համալիրի վերականգնման եւ տարածաշրջանի գրավչությունը բարձրացնելու համապարփակ ծրագիրը, որի արժեքն է 20 մլն դոլար: Այն ֆինանսավորվելու է սփյուռքահայ գործարարների միջոցով: Ծրագրի շրջանակում նախատեսվում է կառուցել Հայաստանում մամնը չունեցող ճոպանուղի, որն ըստ փորձագետների լինելու է աշխարհում ամենաբարձրերից եւ ամենաերկարներից մեկը: Ծրագրի իրականացման աշխատանքները ընթացքի մեջ են:
5. ՀՀ կառավարությունը ձեռնամուխ է եղել շինարարական ոլորտի աշխուժացմանը՝ հաշվի առնելով վերջինիս խիստ կարեւոր դերը երկրի ՀՆԱ-ի ձեւավորման գործում: Այդ նպատակով նախ եւ առաջ պետական երաշխիքներ են ներկայացվում այն կառուցապատողներին, որոնց բազմաբնակարան անավարտ շինություններն ունեն 50 տոկոս եւ ավելի ավարտվածության աստիճան: Ընդհանուր առմամբ 6 կառուցապատողներին տրամադրվել է մոտ 12 մլն ԱՄՆ դոլար բյուջետային երաշխիք: Շինարարության ավարտին շահագործման կհանձնվի մոտ 116 000 քմ տարածք: Հաջորդ նախաձեռնությամբ ՀՀ կառավարությունը ձեռնամուխ է եղել նոր օրենքի մշակմանը, ըստ որի

նախատեսվում է ՀՀ-ում 2009-2011թթ. սուբսիդավորել 1 մլրդ դրամ եւ ավելի արժողությամբ հանրային բնույթի նոր շինարարության գործընթացը՝ շինարարության ավարտից հետո կառուցապատողին վերադարձնելով ընթացքում պետական բյուջե վճարած ԱԱՀ եւ սոցիալական վճարի ամբողջ ծավալը:

6. Շինարարության ոլորտի աշխուժացման, ինչպես նաեւ բնակչության սոցիալական հիմնախնդիրների լուծման նպատակով հիմնվել է «Ազգային Հիպոթեքային Ընկերություն» ՌԻՎԿ ՓԲԸ-ն՝ 5 մլրդ դրամ կանոնադրական կապիտալով: Ընկերությունը երկարաժամկետ միջոցներ է տրամադրում իր հետ համագործակցող ՀՀ բանկերին եւ վարկային կազմակերպություններին, վերջիններիս կողմից բնակչությանը տրամադրվող հիպոթեքային վարկերը վերաֆինանսավորելու միջոցով՝ դրանով իսկ նպաստելով անշարժ գույքի շուկայի ակտիվացմանը: Հետագայում ընկերությունը նախատեսում է արժեթղթերի թողարկման միջոցով ռեսուրսներ ներգրավել կապիտալի շուկայից եւ տեղաբաշխել ՀՀ հիպոթեքային վարկատուների միջև: Նշենք, որ Ռուսաստանի Գաշնության տրամադրած վարկային ռեսուրսներից եւս 12 մլրդ դրամ ուղղվելու է «Ազգային Հիպոթեքային Ընկերություն» ՌԻՎԿ ՓԲԸ-ին:

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻՆ

1. Տնտեսության իրական հատվածի զարգացմանն ուղղակիորեն նպաստելու նպատակով ձեւավորվել է Օպերատիվ շտաբ, որը քննարկում է մասնավոր հատվածից ստացված բիզնես նախագծերը, ինչպես նաեւ որոշում աջակցության ձեւաչափը: Ենթադրվում է առանձին ձեռնարկություններին հասցեագրված օգնություն, որի նպատակն է ստեղծել նոր աշխատատեղեր, խթանել ներմուծման փոխարինումը տեղական արտադրանքով, ավելացնել արտահանումը, ընդլայնել տեղական հումքի օգտագործումը, խթանել ինովացիոն տեխնոլոգիաների կիրառումը: Այս նպատակին հասնելու համար կիրառվում են պետական երաշխիքների տրամադրում, սուբսիդավորում, այդ թվում՝ գյուղատնտեսության ոլորտում, ուղղակի վարկավորում, մասնակցություն ձեռնարկատիրական կապիտալում: Արդեն իսկ ստացվել են մոտ 300 բիզնես նախագծեր, Օպերատիվ շտաբի կողմից հավանության է արժանացել 14.1 մլրդ դրամ արժողությամբ 44 նախագիծ:

2. ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորության տրամադրման ծրագրի շրջանակում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ կողմից 2009թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ տրամադրվել է 233.5 մլն ՀՀ դրամ երաշխավորություն 45 ՓՄՁ սուբյեկտի՝ ապահովելով 415.0 մլն ՀՀ դրամի վարկային փաթեթ:
3. Ռ-Գ-ից ստացված միջպետական 500 մլն դոլար վարկի գումարի ներքո հաստատվել է տնտեսության կայունացման վարկավորման ծրագիր, որը նպատակ ունի խթանել համախառն ներքին արդյունքի աճը՝ ֆինանսական ճգնաժամի պայմաններում տնտեսավարող սուբյեկտների վարկային պահանջարկը մասնակի բավարարելու միջոցով: Ծրագրի ընդհանուր գումարը կազմում է 90 մլրդ դրամ (250 մլն դոլար): Այն բաղկացած է երեք բաղադրիչից:
- Առաջին բաղադրիչի վարկառուներն են բանկերը եւ վարկային կազմակերպությունները: Ֆինանսական հատկացման չափը կազմում է 60,5 մլրդ դրամ, որից հիպոթեքային շուկա՝ 12 մլրդ դրամ, արտահանում խթանող, մթերող-վերամշակող, օդային փոխադրումներ, ենթակառուցվածքներ ապահովող տուրիզմ, սպառողական վարկավորում, ավտովարկավորում, բնակարանների եւ անհատական բնակելի տների վերանորոգման եւ վերակառուցման վարկավորում՝ 30 մլրդ դրամ, փոքր եւ միջին ձեռներեցություն՝ 18,5 մլրդ դրամ:
 - Երկրորդ բաղադրիչը փոքր եւ միջին ձեռնարկատիրության վարկավորումն է: Բաղադրիչի վարկառուն է «Հայաստանի փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի» կողմից հիմնադրված, լիցենզավորված վարկային կազմակերպությունը, որի նպատակը ՓՄՁ վարկավորման գործընթացը առավել արդյունավետ դարձնելն է: Այս բաղադրիչի ֆինանսական հատկացման չափը 6,4 մլրդ դրամ է:
 - Երրորդ բաղադրիչը համակարգաստեղծ կամ խոշոր ենթակառուցվածքների գործունեություն ապահովող տնտեսավարող սուբյեկտների վարկավորումն է: Բաղադրիչը իրականացվում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից՝ ՀՀ կառավարության առանձին որոշումներով նախատեսված վարկառուներին, համապատասխան որոշմամբ կատարված հատկացումներով եւ սահմանված պայմաններով: Բաղադրիչի ֆինանսական հատկացման չափը կազմում է 23,1 մլրդ դրամ:
 - Ռուսաստանից ստացված վարկի շրջանակում Հայաստանի համար համակարգաստեղծ ոլորտներից մեկի՝ հանքարդյունաբերական ոլորտի

զարգացումը խթանելու նպատակով «Ձանգեզուր մայնինգ», «Արմենիան մոլիբդեն փրոդաքշն» եւ «Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ընկերություններին պետական բյուջեից հատկացվել են ընդհանուր առմամբ 44.0 մլն ԱՄՆ դոլար վարկային միջոցներ՝ ըստ ընկերությունների ներկայացրած բիզնես ծրագրի օգտագործման ուղղությունները ֆինանսավորելու համար:

4. ՓՄՁ վարկավորման համար օգտագործվում են նաեւ միջազգային ֆինանսական ինստիտուտների միջոցները: Այսպես, ՀԲ տրամադրած 85 մլն դոլար վարկից 50 մլն դոլարը արդեն իսկ ուղղվել է ՓՄՁ զարգացմանը, իսկ մնացած գումարը կտրամադրվի ճանապարհաշինարարությանը:
5. Հայաստանի Հանրապետությունը մասնակցում է «ԵվրԱզԷս» հակաճգնաժամային հիմնադրամի աշխատանքին, որի արդյունքում բացառիկ հնարավորություն է ընձեռվում 10 մլրդ դոլար ընդհանուր ռեսուրսներից միջոցներ ներգրավել ՀՀ-ում մեծածավալ ներդրումային ծրագրերի իրականացման համար:
6. Հայաստանի Հանրապետության իրավաբանական եւ ֆիզիկական անձանց կողմից մաքսային սահմանով տեղափոխվող մինչև 2,5 տոննա գյուղատնտեսական մթերքի համար Հայաստանի Հանրապետության առետրասարդյունաբերական պալատի կողմից ծագման երկրի հավաստագրի տրամադրման վճարի չափը սահմանվել է 2.000 դրամ՝ 15.000 դրամի փոխարեն: Հավաստագրի ստացման համար նախկինում պահանջվող 7 փաստաթղթի փոխարեն այժմ տնտեսվարողը պետք է ներկայացնի ընդամենը 3 փաստաթուղթ: Հավաստագիրը տրամադրվում է 1 օրում՝ նախկին 3 օրվա փոխարեն ու առանց փորձաքննության ակտի (նախկինում փորձաքննության համար վճարվում էր 2.000 դրամ): Արտահանվող բույսերի, բուսական արտադրանքի եւ կարգավորվող առարկաների բուսասանիտարական հավաստագիրը այսուհետեւ տրամադրվում է միայն բուսասանիտարական զննման միջոցով եւ անվճար:
7. Վերացվել է Հայաստանի Հանրապետությունից դեղերի եւ դեղանյութերի արտահանման ժամանակ պարտադիր հավաստագրման պահանջը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

- Հակաճգնաժամային միջոցառումների ցանկում առանձնանում է կառավարության նախադեպը չունեցող որոշումը, ըստ որի

գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող փոքր ֆերմերային տնտեսություններին հատկացվել է պետական աջակցություն:

- Բացի այդ, ՀՀ կառավարությունը որոշում է ընդունել Շիրակի մարզի 60 առավել անապահով տնտեսությունների վարկային տոկոսների սուբսիդավորման մասին: Ավելին, որպես պետական աջակցություն 1 հա համար 35 հազ. դրամ է հատկացվել բարձր լեռնային եւ սահմանամերձ համայնքներում հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների զարգացման նպատակով, որի ընդհանուր գումարը 2009թ. կազմել է 1.5 մլրդ դրամ:
- Ստեղծվել է նաեւ FREDА վենչուրային հիմնադրամը, որի նպատակը գյուղատնտեսության ոլորտի ձեռնարկություններին աջակցությունն է, ինչպես վարկերի, այնպես էլ կապիտալում մասնակցության միջոցով:

«ՊԵՏՈՒԹՅՈՒՆ - ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ» ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

1. Կառավարությունը հավանություն է տվել Գառնի-Գեղարդ ավտոմայրուղուն հարող տարածքում ագրոտուրիստական-հյուրատնային կենտրոնի ստեղծման ծրագրին: Առաջին անգամ է, որ կառավարությունը նախապատրաստում է ներդրումային ամբողջական ծրագիր ու հանում այն աճուրդի: Հավանություն են ստացել նաեւ Ջերմուկ քաղաքի զարգացման 2009-2012թթ. ռազմավարությունը ու «Տաթեւ» զբոսաշրջային կենտրոնի զարգացման ծրագրի հայեցակարգային նպատակները եւ գերակա խնդիրները:
2. ՀՀ Ազգային ժողովն ընդունել է Համահայկական բանկի մասին օրենքը, որը սահմանում է բանկի գործունեության իրավական եւ ինստիտուցիոնալ հիմքերը: Համահայկական բանկը լինելու է այն ռազմավարական կառույցներից մեկը, որի միջոցով համազգային ծրագրերի իրականացման նպատակով համախմբվելու են աշխարհասփյուռ հայերի ջանքերն ու կարողությունները: Համահայկական բանկը արդեն իսկ գրանցված է եւ շուտով կամփոփվի տնօրենի պաշտոնը զբաղեցնելու նպատակով հայտարարված մրցույթը: Գործունեության սկիզբը նախատեսվում է 2010թ.:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՀՀ կառավարությունը հայտարարել է «Երիտասարդներին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի մեկնարկը, որի հիմնական նպատակն է սոցիալապես

անապահով ընտանիքների աջակցությունը: Ծրագրով նախատեսվում է պետական օժանդակություն իրականացնել երիտասարդ ընտանիքներին՝ հիպոթեքային վարկավորման միջոցով բնակարան ձեռք բերելու նպատակով: Նշված օժանդակությունը նախատեսվում է իրականացնել հետեւյալ երկու ուղղություններով.

- պետության կողմից 10-15 տարի մարման ժամկետով անտոկոս փոխառության տրամադրում՝ հիպոթեքային վարկի կանխավճարի համար պահանջվող գումարի 30 տոկոսի չափով, իսկ երիտասարդ ընտանիքում անչափահաս երեխաների առկայության դեպքում՝ ամեն մի երեխայի համար՝ եւս տաս տոկոս:
- պետության կողմից հիպոթեքային վարկի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորում: Երիտասարդ ընտանիքում անչափահաս երեխաների առկայության դեպքում յուրաքանչյուր երեխայի հաշվարկով կսուբսիդավորվի եւս տաս տոկոս՝ մինչեւ նրա չափահաս դառնալը:

ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական հանձնաժողովը 2009թ. հունվարի 1-ից Հայաստանն ընդգրկել է կայուն զարգացման եւ արդյունավետ կառավարման համար ԵՄ կողմից տրամադրվող «Արտոնությունների ընդհանրացված համալրված համակարգ» (GSP+) արտոնյալ առևտրային ռեժիմից օգտվող երկրների ցանկում, ինչը դրանից օգտվող երկրներին հնարավորություն է տալիս շուրջ 6400 ապրանքատեսակներ ԵՄ շուկա արտահանել գրոյական կամ զգալիորեն նվազեցված մաքսատուրքով, ինչպես նաև արտահանողներին արտոնյալ պայմաններով ապրանքներ ներմուծել Եվրամիության շուկա, որի շնորհիվ կկրճատվեն վերջիններիս արտահանման ծախսերը եւ կբարձրանա մրցունակությունը ԵՄ շուկայում:

ՀՀ-ԵՄ ազատ առևտրի համաձայնագրի կնքումը 2008թ. մեկնարկած Արեւելյան գործընկերության նախաձեռնության շրջանակում նախատեսվող համագործակցության առանցքային նպատակներից է: Եվրոպական ինտեգրման գործընթացի ներքո ազատ առևտրի համաձայնագրի կնքումը բացառիկ հնարավորություն է ՀՀ-ի համար՝ եվրոպական միասնական շուկա մուտք գործելու եւ հայկական ծագման ապրանքատեսակները եվրոպական շուկայում առաջ մղելու համար: ՀՀ-ԵՄ ազատ առևտրի համաձայնագրի կնքումը ներկայումս գտնվում է ՀՀ կառավարության առաջնահերթ ծրագրերի օրակարգում: Բանակցության մեկնարկի ուղղությամբ արդեն իսկ շոշափելի քայլեր են ձեռնարկվել: Մասնավորապես, համաձայնագրի կնքման հնարավորությունը քննարկելու համար 2009թ. փետրվարին Հայաստան էր ժամանել ԵՄ

փաստահավաք առաքելությունը: Հունիս ամսին Եվրոպական Հանձնաժողովը հրապարակել է փաստահավաք առաքելության պատրաստած գեկույցը՝ ՀՀ-ԵՄ խոր եւ համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի ապագա բանակցության նախապատրաստական գործընթացի վերաբերյալ: Ձեկույցում ըստ ոլորտների նշված են այն խնդիրները, որոնք դեռևս բարեփոխման եւ առաջընթացի կարիք ունեն ՀՀ-ում: Ձեկույցին համապատասխան մշակվել է գործողությունների պլան, որի իրականացման արդյունքում միայն հնարավոր կլինի ազատ առևտրի համաձայնագրի կնքումը:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի կառավարությունը քաջ գիտակցում է գիտության զարգացման կարևորությունը կայուն տնտեսություն եւ առաջադեմ հասարակություն ունենալու գործում, ինչի վառ ապացույցն են վերջերս ընդունված երկու որոշումները:

1. Առաջինը վերաբերում է «Քենդլ» սինքրոտրոնային լույսի աղբյուրի նախագծի հիման վրա միջազգային կենտրոնի ստեղծմանը, ինչը բեկումնային քայլ է Հայաստանում հիմնարար եւ կիրառական գիտության զարգացման համար:
2. Երկրորդ որոշմամբ Երեւանի ֆիզիկայի ինստիտուտում «Ցիկլոտրոն» համակարգի միջոցով իրականացվելու է իզոտոպների արտադրություն եւ ստեղծվելու է հատուկ բժշկական կենտրոն չարորակ գոյացությունների վաղաժամ հայտնաբերման եւ ճշգրիտ ախտորոշում իրականացնելու նպատակով:

Ծրագրի իրականացման արդյունքում մասնավորապես ակնկալվում է, որ

- ✓ Հայաստանում ուռուցքաբանությունը եւ սիրտանոթային հիվանդությունների բուժումը կհասնեն զարգացած եվրոպական երկրների մակարդակին, կկիրառվեն ախտորոշման ժամանակակից մեթոդներ,
- ✓ Հայաստանը կդառնա տարածաշրջանային նշանակության ուռուցքաբանության կենտրոն, որը թույլ կտա արտահանել առողջապահական ծառայություններ,
- ✓ Հայաստանը կդառնա տարածաշրջանում կիրառական ֆիզիկայի կենտրոն, որը թույլ կտա ընդլայնել կրթական եւ փորձարարական հնարավորությունները, ինչպես եւ ակտիվ համագործակցությունը երիտասարդ գիտնականների եւ ուսանողների միջազգային փոխանակման ծրագրերում,

- ✓ կճևավորվի գիտական, ինովացիոն տեխնոլոգիական շղթա, որը կնպաստի գիտական ներուժի և գիտահետազոտական ինստիտուտների զարգացմանը, որն իր արձագանքը կարող է բերել տնտեսության տարբեր ճյուղերում՝ բնագիտություն, գյուղատնտեսություն, արդյունաբերության և այլն,
- ✓ Իրական հիմքեր կստեղծվեն բնակչության առողջության բարելավման և մահացության կրճատման համար:

Ծրագրի ներքո առաջարկվող տեխնոլոգիայի ներդրումը Հայաստանին թույլ կտա տիրապետել ախտորոշման և բժշկության առավել արդիական մեթոդների, արմատապես բարելավել բնակչության բժշկական սպասարկման մակարդակը: Հայաստանը կդառնա բժշկական նպատակով օգտագործվող ռադիոնուկլիդներ արտահանող երկիր:

Վերջաբան

Վերը նշված հակաճգնաժամային և երկարաժամկետ զարգացմանն ուղղված ծրագրերը կշարունակեն իրականացվել Հայաստանի հանրային ֆինանսների կառավարման լավագույն ավանդույթներին համապատասխան, հանրային միջոցներով իրականացվող այդ բոլոր ներդրումային ծրագրերը կարտացոլվեն պետական ֆինանսական հաշվեկշիռներում (բյուջեում)՝ ապահովելով բարձր մակարդակի հաշվետվողականություն և թափանցիկություն: Մասնավոր հատվածին պետական աջակցության հնարավոր ոչ-ավանդական միջոցառումները կունենան սահմանափակ և ժամանակավոր բնույթ: Կներդրվեն հանրային ներդրումային ծրագրերի գնահատման զարգացած համակարգեր: Կառավարությունը հավատարիմ կմնա իր որդեգրած ազատական տնտեսական քաղաքականության սկզբունքներին և ԱՀԿ և այլ միջազգային կառույցների առջև իր ստանձնած պարտավորություններին: Տնտեսական ճգնաժամի արդյունքում առաջացած քաղաքականության որոշակի ճշգրտման անհրաժեշտությունը ոչ մի դեպքում չի հանդիսանա ազատական քաղաքականության ուղուց շեղվելու պատճառ: